

մէջ կայսերական պէրաթներով ու հրամաններով նորոգուեցան, վերահաստատուեցան: Պոլսոյ Պատրիարքութիւնը՝ ալ զատուած Երուսաղէմի Պատրիարքութենէն՝ անդրադարձաւ ինքն իր վրայ, ժողովեց ինքզինքը՝ շուայտութեան մէջ տուայտող խելացի մարդու պէս: Ինչ որ երբեմն Այնթապցի Եղիազար Վաթողիկոսը չկրցաւ ընել իր ոսկիներով, իր արտաքոյ կարգի ճարպիկութեամբ, իր անհատական արժանիքով, կոլոտ բրաւ ինքնին: Եղիազար՝ որ Պոլսոյ, Երուսաղէմի եւ Էջմիածնի աթոռներուն վրայ բազմեցաւ հետզհետէ, կը փափաքէր Օսմանեան պետութեան մէջ հաստատել Վաթողիկոսութիւն մը: Այս ծրագրին լոկ փառասիրական հանգամանք մը տրուած է պատմութեան մէջ. բայց իսկապէս այդպէս չէր: Չեռնարկը խրտուցիչ էր յիրաւի: Երբ կային Վաթողիկոսական երէ+ Աթոռներ, շէր-շէր մըն ալ ստեղծել տարօրինակ էր բոլորովին: Եղիազար, սակայն, Վաթողիկոսական երեք Աթոռները ջախջախելու եւ կամ Լուսաւորչի Աթոռին դէմ թշնամութիւն մ'ընելու միտք չունէր: Նա չափազանց հեռատեսութեամբ կը նայէր այն երեւոյթներուն վրայ, որոնք հետզհետէ պիտի իրականանային Էջմիածնի շուրջը, քաղաքական բաժանումով նախ պարսիկ եւ ետքը ռուս տիրապետութեան տակ: Իսկ ասդին Պոլսոյ Պատրիարքութիւնը, որուն վրայ կը կենդրոնանար Թուրքիոյ Հայոց եկեղեցական ու կրօնական գործերը, Եղիազարի համար պէտք էր ըլլար Վաթողիկոսական Աթոռ մը: Եղիազարի մտածութեան արտաքինը խրտուցիչ էր, իսկ ներքինը՝ իրականութիւն մըն էր քստ ինքեան, եւ կոլոտ, նոյնչափ խորագէտ, բնաւ չզբաղեցաւ, արտաքինով եւ Պոլսոյ պատրիարքութեան տուաւ իր դիրքը: Առանց Վաթողիկոսութիւն մ'ըլլալու, Վաթողիկոսութիւնը ներկայացուց Պոլսոյ պատրիարքութիւնը եւ կը ներկայացընէ: Պոլսոյ պա-